

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՏՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Կատարողականի գնահատման մեթոդաբանությունը մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» N 693-Ն որոշումը:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործունեության կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ,
2. գործընթացի չափորոշիչներ,
3. արդյունքի չափորոշիչներ:

Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատումը կատարվում է Տեսչական մարմնի վերահսկողության յուրաքանչյուր ոլորտի համար առանձին: Արդյունքները համեմատվում են նախորդ տարվա նույն հաշվետու ժամանակահատվածի արդյունքների հետ:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Նպատակի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի հիմնական նպատակին՝ վերահսկողության բնագավառներում անվտանգությանը և օրենսդրության հետ համապատասխանությանը:

1.1 Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծել հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումները և հաշվարկել լրացված ստուգաթերթերի խախտումների ընդհանուր կշիռների միջին ցուցանիշը:

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$L = S_1/S$$

որտեղ՝

L – հաշվարկվող ցուցանիշն է,

S₁ – հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարն է,

S – ստուգաթերթերով սահմանված կշիռների առավելագույն միավորների հանրագումարն է:

1.2 Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվարկել հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռների միջին ցուցանիշը:

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$C = S_R/S$$

որտեղ՝

C – հաշվարկվող ցուցանիշն է,

S_R – հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարն է,

S – ստուգաթերթերով սահմանված կշիռների առավելագույն միավորների հանրագումարն է:

Գնահատումը կատարվում է՝ ըստ նախորդ տարվա նույն հաշվետու ժամանակամիջոցում ունեցած արդյունքի համեմատությամբ առկա փոփոխությունների:

1.3 Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները¹.

Չափորոշիչը գնահատվում է՝ ելնելով ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար մարդկային ռեսուրսների և ֆինանսական միջոցների լրացուցիչ հատկացումից: Հաշվի է առնվում հատկացված լրացուցիչ միջոցների հիմնավորվածությունը և արդյունքը:

1.4 Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Չափորոշիչը գնահատվում է՝ ելնելով խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի մարդկային ռեսուրսների և ֆինանսական միջոցների հատկացումից, ինչպես նաև փաստացի իրականացված խորհրդատվական, մեթոդական աջակցության և իրազեկման միջոցառումների քանակից և դրանցում մասնակիցների ընդգրկվածությունից:

1.5 Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը².

Գնահատման համար հաշվարկվում է հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ՀՀ կառավարություն կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկությունների քանակը, որը համադրվում է առաջարկություններ ներկայացնելու անհրաժեշտության և արդյունքի հետ:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

¹ Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

² Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում կիսամյակը:

Գործընթացի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին:

2.1 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվարկել հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չալանավորված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում բուն ստուգման գործընթացի միջին տևողությունը.

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$R = T/N$$

որտեղ՝

R – հաշվարկվող ցուցանիշն է,

T – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողությունն է,

N – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակն է:

2.2 Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ.

Չափորոշիչի գնահատման համար անհրաժեշտ է հաշվարկել բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի հարաբերությունը Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և նույն ժամանակահատվածում իրականացված ստուգումների ընդհանուր քանակին:

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$R = N_2/N_1,$$

որտեղ՝

R – հաշվարկվող ցուցանիշն է,

N₂ – բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակն է,

N_1 – ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է:

2.3 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = T/N$$

որտեղ՝

A – հաշվարկվող ցուցանիշը,

T – ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների տևողությունների հանրագումարն է,

N – ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակն է:

2.4 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

Չափորոշիչը գնահատելու համար նշված հարաբերակցությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$R = N_2/N_1$$

որտեղ՝

R – հաշվարկվող ցուցանիշն է,

N_2 – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է, որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ,

N_1 – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է:

2.5 Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի

թափանցիկությունից, տեղեկատվության որակից և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Չափորոշիչի գնահատումը կատարվում է՝ ելնելով Տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տեղեկատվության որակի և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ ստացված դիմում-բողոքների, լրացված իրազեկման թերթիկների և այլ արձագանքների վերլուծությունից (պաշտոնական կայքէջ, ֆեյսբուքյան էջ և այլն):

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Արդյունքի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին:

3.1 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը.

Չափորոշիչը գնահատելու համար նշված հարաբերակցությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$R = N_2/N_1$$

որտեղ՝

R – հաշվարկվող ցուցանիշն է,

N_2 – ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է,

N_1 – ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է:

3.2 Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը³ հաշվարկվում է՝ ելնելով նշված

³ Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

բնագավառների այն տնտեսավարող սուբյեկտների քանակից, որոնց ռիսկայնությունը վերահսկողության արդյունքում փոփոխվել է:

3.3 Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Գնահատման համար հաշվարկվում են ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշները, ինչպես նաև հաշվարկվում է առանձին ստուգմանը ոչ համարժեք ֆինանսական միջոցների ու մարդկային ռեսուրսների հատկացմամբ ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ:

3.4 Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

Չափորոշիչը գնահատվում է՝ վերլուծելով հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի, նրա մասնագետների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի դեմ բերված բողոքների քանակը, և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները:

Չափորոշիչը գնահատվում է՝ հաշվարկելով ստացված բողոքների քանակը իրականացված ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ: